Հավելված N 7
2021թ. « փետրվար» «16 »
N ԴՏՊ-1160-11008/Մ-4 պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում»

Համառոտ բովանդակությունը՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2021թ. փետրվարի 1-ից իրականացնում է «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագիրը Արմավիրի մարզում: Ծրագրի նպատակն է՝ ապահովել աուտիզմ ունեցող անձանց համայնքում և ընտանիքում ապրելու իրավունքը, նրանց սոցիալական ներառումը հասարակություն, կանխարգելել աուտիզմ ունեցող անձանց մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ:
Կենտրոնը սոցիալ-հոգեբանական և վերականգնողական ծառայություններ է մատուցում ամսական միջինում 28 աուտիզմ ունեցող անձանց/երեխաների: Բացի անհատական և խմբային թերապիաներից և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցումից կենտրոնում գործում են նաև խմբակներ՝ նկարչական և դիզայնի: Շահառուներն ըստ գնահատված կարիքի և կարողությունների համապատասխան խմբակներում կատարում են նկարչական աշխատանքներ, բացիկների, տարբեր զարդարանքների պատրաստում, ինչպես նաև պոլիմերային կավից զարդեր: Էրգոթերապիստի կողմից իրականացվում են անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված պարապմունքներ, խմբային, ինչպես նաև խոհանոցում կատարվող աշխատանքներ՝ ուղղված կենցաղավարման կարողությունների ուսուցմանն ու զարգացմանը: Բոլոր մասնագետների կողմից իրականացվում է նաև մասնագիտական կողմնորոշում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր շահառուի կարողությունները, հմտություններն ու հետաքրքրությունները:

Հաշվետու ժամանակաշրջան՝ *01.01.2021-31.03.2021*

	Իրականացված գործողություններ				
	Գործառույթների նկարագիր (1)	Ակնկալվող արդյունքները (2)	Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր (3)*	Փաստացի մատուցած ծառայություններ (4)	Մեկնաբանություն (5)

	Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում	Ստանալ հստակ նկարագիր յուրաքանչյուր շահառուի կարիքների և կարողությունների վերաբերյալ, որպեսզի դրա հիման վրա մշակվի յուրաքանչյուրի հետ աշխատանքի ուղղություններն ու նպատակները	Շահառուների ցուցակ, Յուրաքանչյուր շահառուի համար լրացված ՖՄԴ հարցաթերթ	Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 28 շահառուի կարիքների ու կարողությունների գնահատում, առկա են լրացված ՖՄԴ հարցաթերթերը	
	Անհատական զարգացման պլանի մշակում	Յուրաքանչյուր շահառուի համար ունենալ հստակ պլան, որի հիման վրա կիրականացվեն անհրաժեշտ պարապմունքներն ու ծառայությունները	Յուրաքանչյուր շահառուի անհատական զարգացման սոցիալ-վերականգնողական պլան	Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են 28 շահառուների անհատական զարգացման պլանները, որոնց հիման վրա մատուցվում են սոցիալ-վերականգնողական ծառայությունները	
	Ծառայությունների, պարապմունքների ու խմբակների նախանշում	Ունենալ հստակ աշխատանքային ժամանակացույց և խմբակների բաժանում, որպեսզի մասնագետներն իրականացնեն իրենց աշխատանքները:	Շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամանակացույց	Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է աշխատանքային ժամանակացույց, որը, որպեսսկզբնական շրջան, որոշակի փոփոխություններ կրելուց հետո արդեն հաստատվել է:	
	Շահառուների կամ նրանց ծնողների հետ պայմանագրերի կնքում	Ունենալ իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:	Յուրաքանչյուր շահառուի հետ կնքած պայմանագիր՝ երկու կողմերի ստորագրությամբ	Հաշվետու ժամանակահատվածում թվով 28 շահառուների ծնողների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրերը, որոնք ստորագրված են երկկողմանի:	
	Ամենօրյա պարապմունքների, խմբակների ու ծառայությունների մատուցում	Հասնել ծրագրում նշված արդյունքներին յուրաքանչյուր շահառուի համար:	Հաճախումների մատյան, ծառայությունների մատուցման ավարտական ակտեր, նկարներ պարապմունքներից, հանրային միջոցառումներից:	Բոլոր վերոնշյալ գործողությունների կատարման արդյունքում և ընթացքում կենտրոնի շահառուներին մատուցվում են ծառայություններ:	

Ընդամենը շահառուներ՝ 28
Ազդեցությունը՝ • Ամսական միջինում 28 աուտիզմ ունեցող շահառուներին անհրաժեշտ սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում, • Շահառուների կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճ, • Շահառուների՝ հանրակրթական դպրոցներում և մասնագիտական կրթական այլ հաստատություններում ներառվելու գործընթացին աջակցություն, • Շահառուների ընտանիքում ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացմանն աջակցություն:

Շահառուներ

Ովքեր են հիմնական շահառուները, ինչպես են նեգրավվել. ներկայացնել փվյալները.

Կենտրոնի հիմնական շահառուների Արմավիրի մարզի քաղաքային և գյուղական համայնքների աուտիզմ ունեցող երեխաներն են: Շահառուն ներգրավվել են՝ հաշվի առնելով կենտրոնի նախկին փորձը: Կենտրոնն արդեն ուներ աուտիզմ ունեցող երեխաներ՝ շահառուներ, սակայն շահառուների ներգրավումը իրականացվել է ինչպես նախկիններին հետ ունեցած փորձից ու պահանջարկից, այնպես էլ՝ պետական կառույցների հ համագործակցության արդյունքում, մարզպետարանի սոցիալական վարչության, տեղական սոցիալական ծառայությունների տարածքա գործակալությունների հետ համագործակցությամբ: